Արձանագրություն N 2
ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ-ԱՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-14/19» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31 հուլիսի 2019թ. ժամը 12:00-ին:

Նախագահ՝
Նորաին Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝
Արթուր Կարապետյան
Մանվել Հարությունյան
Էդգար Մնոյան
Էդգար Մելիքյան

Գնումները համակարգող՝ Ն. Տիգրանյան

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

1.1 ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-14/19 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Համշիննախագիծ» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 03309254, էլ. հասցե hamashin@mail.ru:

1.2 31.07.2019թ.-ի դրությամբ մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին
Մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ

	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 *Գեղաձոր բնակավայրի փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ* **Նախահաշվային գինը՝** **1 881 610 ՀՀ դրամ**	
«Համշիննախագիծ» ՍՊԸ	1 790 000	1 790 000

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 Հաշվի առնելով, որ «Համշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի 2019թ. գնումների անվանացակով, ինչպես նաև սույն ընթացակարգի ծավալաթերթ-նախահաշվով սահմանված ֆինանսական միջոցների (առանց ԱԱՀ նախատեսված է 1568010 ՀՀ դրամ), իսկ «Համշիննախագիծ» ՍՊԸ-ն առանց ԱԱՀ առաջարկել է 1790000 ՀՀ դրամ, ուստի գնահատող հանձնաժողովը **որոշեց**.

5.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ սույն ընթացակարգի մասով գնային առաջարկի նվազեցման նպատակով սույն թվականի օգոստոսի 7-ին ժամը 12:00-ին (ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք Հոկտեմբերյան 2 հասցեում) «Համշիննախագիծ» ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների:

5.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն թվականի օգոստոսի 7-ին ժամը 12:00-ին ՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով (15 րոպե տևողությամբ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ն. Հակոբյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Կարապետյան

_____ Մ. Հարությունայն

_____ Է. Մնոյան

_____ Է. Մելիքյան

Գնումները համակարգող ՝ _____ Ն. Տիգրանյան